ԳԵՎՈՐԳ ԹԱՄԱՐՅԱՆ

ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐԻ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՇՈՒԿԱՅԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Պատմականորեն պայմանավորված մի շարք պատճառներով, հանրապետության ընդերքի ռեսուրսային ներուժի ուսումնասիրումն ու օգտագործումն իրականացվել է այնպես, որ ըստ էության անտեսվել են Հայաստանի համալիր սոցիալ-տնտեսական զարգացման էկոլոգիական հետեւանքները եւ ռազմավարական նպատակներն ու հեռանկարները [1]:

Մասնավորապես շինանյութերի ռեսուրսների օգտագործման ոլորտը մինչեւ այժմ ունեցել է և ունի էքստենսիվ ուղղվածություն ու բնութագրվում է ընդերքի անարդյունավետ յուրացմամբ: Ներկայումս ոլորտում առկա են.

- մեծ կորուստներ՝ շինանյութերի արդյունահանման և վերամշակման ժամանակ,
- շինանյութերի հանքահումքի ոչ լրիվ օգտագործում,
- շինանյութերի առաջնային հանքահումքից սահմանափակ տեսականիով հանքարտադրանքների ստացում,
- երկրորդային ռեսուրսների օգտագործման ցածր աստիճան,
- շրջակա միջավայրի էկոլոգիական բեռնվածություն:

Միաժամանակ միջպետական ապրանքափոխանակության հաշվեկշռում զգալի տեսակարար կշիռ ունեն Հայաստան ներմուծվող առաջնային հումքատեսակները. 2001թ-ին հանրապետություն ներմուծված ապրանքների ընդհանուր ծավալում (ինչպես և նախորդ տարիներին), մեծ տեսակարար կշիռ է կազմել հանքահումքային արտադրանքը՝ 21,14% (2000թ-ին՝ 20,5%):

Հանրահայտ է, որ մեր հանրապետությունում առկա են փոխարինող բարձրորակ հանքահումքային ռեսուրսներ, որոնց ներուժի արդյունավետ օգտագործումը կապահովի տնտեսության արդյունավետության բարձրացում [2]:

Շինանյութերի արդյունաբերությունը արդյունաբերության ամենանյութատար ճյուղերից է: Այդ իսկ պատճառով շինարդյունաբերությունը ճգնաժամից դուրս բերելու համար անհրաժեշտ է մշակել համալիր զարգացման ծրագիր,

հաշվի առնելով շինանյութերի ռեսուրսների շուկայավարման հիմնախնդիրները:

Ցյուղի ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմանը կարելի է հասնել նպատակասլաց կառուցվածքային տեղաշարժերի շնորհիվ, սակայն՝ նյութա և էներգախնայող արտադրությունների, ռեսուրսախնայող տեխնոլոգիաների ներդրմամբ ու մեքենաների, սարքավորումների, ավտոմատացման միջոցների հիմնական տեխնիկական գործակիցների միավորին ընկնող տեսակարար ծախսերի կրճատումով [3]:

Շուկայական հարաբերությունների պայմաններում, շինանյութերի ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով անհրաժեշտ է նաև՝ նորմավորման նոր սկզբունքների արմատավորում, շինանյութերի ծախսումների նորմատիվների ու նորմերի համակարգերի գիտական հիմունքների մշակում, դրանց օգտագործման տնտեսական արդյունավետության գնահատման մեթոդոլոգիայի մշակում: Դա նշանակում է.

-բացահայտել այն կապերը, որոնք ձեւավորվում են արտադրանքի արտադրության և իրացման գործընթացում,

-հիմնավորել մեկի առաջնայնության ու մյուսների ածանցյալ բնույթը,

-բացահայտել շինանյութերի ռեսուրսների օգտագործման արդյունավետ ուղին:

Շինանյութերի արտադրության մրցունակության կարեւոր նախապայմաններից մեկը շինանյութերի ռեսուրսների օգտագործման արդյունավետության՝ պատրաստի շինանյութերի որակի բարձրացումն է, որը շուկայավարման կարևոր խնդիրներից է: Եվ դա հնարավոր է առանձին ձեռնարկությունների մակարդակով, տարբեր աստիճաններով ու փուլերով՝ հաշվի առնելով շինանյութերի օգտագործման ներկայիս խնդիրները, որոնք անհրաժեշտ են իրականացնել հետևյալ նպատակներով: Նախ՝ պետք է պահպանել խոշոր սերիական և զանգվածային վերջնական օգտագործման շինարտադրանքի՝ շինանյութերի, կոնստրուկցիաների թողարկման նյութապահովվածությունը, հետևապես դրա իրացումը ներքին ու արտաքին շուկաներում:

Երկրորդ՝ նպատակահարմար է ստեղծել շինանյութերի արտադրության նյութապահովվածության անհրաժեշտ նախադրյալներ, ապահովել արտադրա-

կան ծախսերի խնայողությունը, հասնել շինանյութերի ռեսուրսների տնտեսման առաջադեմ մակարդակի, ինչպես նաև շինանյութերի արտադրությունում բացարձակ և տեսակարար ծախսատարության իջեցման կայուն ընթացքի:

Երրորդ անհրաժեշտ է իրականացնել շինանյութերի տնտեսման մակրո և միկրո մակարդակի նպատակային ծրագրերի ներդրում: Սա պետք է իրականացվի շինարտադրանքի տեխնիկական մակարդակի բարձրացման և նյութատեխնիկական նոր նախապայմանների ստեղծման հիման վրա:

Դրա համար շինանյութերի ռեսուրսների օգտագործման շուկայավարումը, որպես տնտեսական վերելքը խթանող միջոց, պահանջում է շինարդյունաբերության կառուցվածքային տեղաշարժերի և շինանյութերի ռեսուրսների նպատակային բաշխման և օգտագործման ժամանակակից սկզբունքների մշակում ու ներդրում:

Շինարարական արտադրանքի թողարկման և շինանյութերի ռեսուրսների արդյունավետ օգտագործման միջոցառումներն անհրաժեշտ է մշակել շինանյութերի արդյունաբերության վերականգնման և վերակազմավորման համալիր ծրագրերի մշակման հետ համատեղ:

Այստեղից հետևում է, որ այդպիսի շուկայավարումը պետք է բերի շինանյութերի ռեսուրսների օգտագործման չափաքանակի կատարելագործում և քիչ թափոնային ու անթափոն տեխնոլոգիաների ներդրում, որոնք անհրաժեշտ են հատկապես համալիր օգտագործման դեպքում: Շինանյութերի ռեսուրսների շուկայավարման նկատմամբ հաջորդ մոտեցումը պետք է լինի օգտագործման ծավալը, փոխադարձ փոխարինման արդյունավետությունը և արժեքը, որոնք փոփոխվում են տարբեր չափերով և նպատակներով: Այդ դեպքում շինանյութերի արտադրական պահանջը կարող է կախված լինել շինհրապարակ գնացող պատրաստի արտադրանքի պահանջից, միավոր արտադրանքի և դրա գլխավոր պարամետրի ստեղծման վրա ծախսվող շինանյութերի ռեսուրսների կրճատման չափերից: Մյուս գործոնը շինանյութի արժեքն է, որի միջոցով որոշվում է օգտագործման ծավալը և արդյունավետությունը: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ շինանյութի գնի միջոցով որոշվում է մշակման տեխնոլոգիաների ներդրման արդյունավետությունը, ինչպես նաև սահմանային ֆիզիկական արդյունքը:

Այդ փոփոխությունները պայմանավորված են շինարարական արտադրանքի ծավալի, տեսականու և շինանյութերի արտադրության նյութատարության: Չնայած շինանյութերի արդյունաբերության արտադրանքի նյութատարությունը, արժեքային արտահայտությամբ, գնալով աճում է, միեւնույն է՝ դրա իջեցումը, կախված արտադրանքի վերակազմավորումից, կարող է նպաստել շինանյութերի ռեսուրսների տնտեսմանը:

Շինարտադրության նյութատարությունը բնութագրվում է միջին ճյուղային նյութատարության ցուցանիշներով, և հատկապես՝ շինանյութերի բացարձակ ու տեսակարար ծախսերի փոփոխության միջոցով: Օրինակ, շինարարական կոնստրուկցիաների կատարելագործման հետ կարեւոր գործոն է անթափոն եղանակների ներդրումը, որը պետք է իրականացվի թողարկող արտադրական հզորությունների նորացմանը զուգընթաց:

Շինանյութերի արտադրության նյութատարության ցուցանիշի փոփոխությունը կախված է մի կողմից՝ թողարկվող արտադրանքի կոնստրուկտորական կատարելագործումից, իսկ մյուս կողմից՝ օգտագործվող հիմնական շինանյութերի գների փոփոխությունից: Կոնստրուկտորական բարելավումը, որպես կանոն, բերում է թողարկվող արտադրանքի մրցունակության բարձրացման, այդ առումով էլ նյութատարության խնդիրը կապված է թողարկվող կոնստրուկցիաների և օգտագործվող շինանյութերի շուկայական գնագոյացման հետ:

Շինարարական արտադրանքի գնի իջեցումը, միևնույն որակի պայմաններում պետք է համարել ոչ միայն շինարարական կազմակերպությունների պահանջմունքների բավարարման, այլև շինանյութերի արտադրության նյութատարության կրճատման տնտեսական հետեւանք:

Շուկայական տնտեսությունում գնագոյացումը իրականացվում է հատկապես ձեռնարկության մակարդակով, իսկ գների վրա ներգործում են ձեռնարկության ներքին և արտաքին գործոնները: Այդ պայմաններում շուկայավարման կարեւոր նպատակը, որը կապված է գների քաղաքականության հետ, համարվում է շահույթի ավելացումը, շուկայի ընդլայնումը, մրցունակության ապահովումը, ապրանքաշարժի նոր ուղիների ընտրությունը եւ այլն[4]:

Նոր շինանյութի տնտեսական արդյունավետության կրճատումը՝ պարամետրերի նվազման պայմաններում, առաջացնում է ոչ միայն առաջարկի, այլև

պահանջարկի նվազում: Նման իրավիճակ է ստեղծվում շինարարական արտադրության ճյուղերում, քանի որ թողարկվող շինանյութի տեխնիկական ցածր մակարդակի և դրա նկատմամբ շինարարական կազմակերպությունների կողմից ներկայացվող ժամանակակից պահանջների պայմաններում անհամեմատ դանդաղ է նորացվում արտադրանքը: Արտադրված շինանյութի ցածր որակը իր սահմանափակ սպառմամբ, արգելակում է ճյուղի արտադրության աճը, շահութաբերության բարձրացումը, և սահմանափակում է համապատասխան պահանջմունքների բավարարումը:

Շինանյութերի արդյունաբերության հետագա զարգացումը բնութագրվում է նվազման շրջանակներով, քանի որ դանդաղել է նոր արտադրանքի թողարկման ընթացքը, իսկ այդ արտադրանքի տեխնիկական մակարդակը չի համապատասխանում պահանջարկին: Այդ պատճառով էլ անկման հատվածը բնութագրվում է շինանյութերի իրացման ծավալի եւ շահույթի խիստ նվազման ընթացքով, որը պայմանավորված է շինանյութերի ռեսուրսների անարդյունավետ օգտագործման մակարդակով:

Շինանյութերի ռեսուրսների շուկայավարման նշված հիմնախնդիրների համալիր լուծումը թույլ կտա նախ ապահովել մրցունակության զուգակցումը շինանյութերի արտադրության վերակազմավորման հետ, ստեղծել մրցունակությանը նպաստող կայուն համամասնություններ գնագոյացման, շինանյութերի ռեսուրսների բաշխման և թողարկվող արտադրանքի վերջնական օգտագործման միջեւ: Երկրորդ կանխել արժեզրկման գործոնների առաջացումը և ապահովել ֆինանսավարկային բարեփոխումների իրականացումը: Անշուշտ, որոշումները պետք է կենսագործվեն շուկայավարման տարբերակներով: Շինանյութերի ռեսուրսների տնտեսման մակրոտնտեսական շուկայավարումը, որպես շինանյութերի արդյունաբերության ենթաճյուղերի մրցունակության ապահովման կարեւոր պայման, պետք է ենթադրի շինանյութերի արտադրության տեխնիկա-տեխնոլոգիական պլանավորման նոր եղանակների ներդրում՝ հաշվի առնելով շինանյութերի արդյունաբերության և արդյունաբերության միջճյուղային տնտեսական կապերի ազդեցությունը տվյալ արտադրության կառուցվածքի փոփոխության եւ շինանյութերի ռեսուրսների արդյունավետ օգտագործման վրա: Այդ առումով էլ ճյուղային շուկայավարման սկզբունքները

պետք է ապահովեն նախ՝ ճյուղի կառուցվածքային տեղաշարժերի ճիշտ ընտրությունը և շինանյութեր արդյունահանող ձեռնարկության տեխնոլոգիական զարգացման պլանավորումը: Երկրորդ՝ շինանյութերի ռեսուրսների ճյուղային բաշխման, գնագոյացման և արդյունավետության հիմքերի ստեղծումը: Ճիշտ է, արտադրության տեղաշարժերի և շինանյութերի ռեսուրսների բաշխման ու օգտագործման նկատմամբ համալիր մոտեցումը ենթադրում է շինարտադրանքի (վերջնարտադրանքի՝ կառույցի) շուկայական իրացման հնարավորությունների ստեղծում, սակայն այդ տեղաշարժերի դեպքում անհրաժեշտ է հիմնվել շինանյութերի արտադրության տեխնիկական մակարդակի և պահանջարկի, իսկ շինանյութերի ռեսուրսների դեպքում՝ պահանջարկի սահմանափակման, փոխադարձ փոխարինման, համալիր օգտագործման հնարավորությունների վրա:

Գրականություն

1. Բաղդասարյան Լ. Մ., Սապոնջյան Խ. Գ.- Հայաստանի հանքահումքային ներուժի արդյունավետ օգտագործման տնտեսագիտական հիմնախնդիրները: «Էկոնոմիկա», 1993, N 9-10, էջ 27-33:

2. Ավագյան Հ. Ս.- Հայաստանի Հանրապետության ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունավետ օգտագործման հիմնախնդիրները: Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 2002, 155 էջ:

3. Մկրտչյան Կ. Մ.-Նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը շուկայական պայմաններում: «Էկոնոմիկա», 1994, N 1-2, էջ 46-50:

4. Basic marketing: a global managerial approach/ E. Jerome McCarthy, William D. Perreault, Jr.-11 th ed, "IRWIN", 1993, 763 p.